Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԿԱՐԵՆ ՂԱՐԻԲՅԱՆԻ Ք. ԲԱՂԴԱԴ (ԻՐԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը. Կարեն Ղարիբյան

2. Զբաղեցրած պաշտոնը. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գիտության քաղաքականության վարչության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները. Իրաքի Հանրապետություն, ք. Բաղդադ, 11-13 սեպտեմբերի, 2023 թվական

4. Հրավիրող կողմը. Տնտեսական համագործակցության հարցերով հայ-իրաքյան միջկառավարական համատեղ հանձնաժողով

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը). Մասնակցություն Տնտեսական համագործակցության հարցերով հայ-իրաքյան միջկառավարական համատեղ հանձնաժողովի 5-րդ նիստին

6. Քննարկված թեմաները.

- Երկկողմ տնտեսական համագործակցության հեռանկարները, մասնավորապես՝ առևտրի, գյուղատնտեսության, ֆինանսների, հեռահաղորդակցության, բարձր տեխնոլոգիաների, կիբերանվտանգության, էներգետիկայի, տրանսպորտի, ենթակառուցվածքների, առողջապահության, կրթության, մշակույթի, սպորտի և զբոսաշրջության ոլորտներում:
- Տնտեսական համագործակցության հարցերով հայ-իրաքյան միջկառավարական համատեղ հանձնաժողովի նիստի արձանագրությունը:
- Քաղաքաշինության և հարակից ոլորտներում համագործակցության և ներդրումային ծրագրերի իրականացման հնարավորությունները:
- Իրաքի Հանրապետությունում կայանալիք տնտեսական միջոցառումներին հայաստանյան ընկերությունների մասնակցության հնարավորությունը:
- Երկու երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունների խորացմանը, առևտրաշրջանառության ընդլայնմանը և ներդրումների խթանմանը վերաբերող հարցերը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Այցի ընթացքում մասնակցել եմ Տնտեսական համագործակցության հարցերով հայ-իրաքյան միջկառավարական համատեղ հանձնաժողովի 5-րդ նիստին, որի շրջանակներում Իրաքի Հանրապետության գործընկերների հետ քննարկվել են երկկողմ տնտեսական համագործակցության հեռանկարները, մասնավորապես՝ առևտրի, գյուղատնտեսության, ֆինանսների, հեռահաղորդակցության, բարձր տեխնոլոգիաների, կիբերանվտանգության, էներգետիկայի, տրանսպորտի, ենթակառուցվածքների, առողջապահության, կրթության, մշակույթի, սպորտի և զբոսաշրջության ոլորտներում:

Միևնույն ժամանակ, բովանդակալից քննարկումներ են տեղի ունեցել «Մշակույթի ոլորտում համագործակցության», «Գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում

համագրոծակցության», «Բարձրագույն կրթության ոլորտում համագործակցության», «Կրթության ոլորտում համագործակցության», «Երիտասարդների հարցերի և սպորտի ոլորտներում համագործակցության» ենթակոմիտեներում երկու երկրների միջև այդ ոլորտներում համագործակցությունը խթանելու նպատակով:

Այցի շրջանակում հանդիպումներ տեղի ունեցել նաև Իրաքի Հանրապետության բնակեցման, քաղաքաշինության և տարածքային կառավարման նախարար՝ Բանկին Ռիկանիի, ինչպես նաև Իրաքի Հանրապետության առևտրի նախարար Ասեր Դաուդ Սալման Ալ-Ղուրեյրիի հետ: Բանկին Ռիկանիի հետ քննարկվել են քաղաքաշինության և հարակից ոլորտներում համագործակցության և ներդրումային ծրագրերի իրականացման հնարավորությունները: Ասեր Դաուդ Սալման Ալ-Ղուրեյրիի հետ հանդիպման ընթացքում կողմերն անդրադարձել են երկու երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունների խորացմանը, առևտրաշրջանառության ընդլայնմանը և ներդրումների խթանմանը վերաբերող մի շարք հարցերի:

Քննարկվել է նաև Իրաքի Հանրապետությունում կայանալիք տնտեսական միջոցառումներին հայաստանյան ընկերությունների մասնակցության հնարավորությունը: Երկուստեք կարևորվել է նիստի արձանագրությամբ ամրագրված պայմանավորվածությունների իրականացման ապահովումը:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Իրաքյան կողմի հետ ձեռք բերված պայմանավորվածությունների հիման վրա ստորագրվել է Տնտեսական համագործակցության հարցերով հայ-իրաքյան միջկառավարական համատեղ հանձնաժողովի 5-րդ նիստի արձանագրությունը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Տնտեսական համագործակցության հարցերով հայ-իրաքյան միջկառավարական համատեղ հանձնաժողովի 5-րդ նիստի արձանագրությամբ ամրագրված պայմանավորվածությունների շրջանակներում երկու երկրների միջև կրթության, գիտության, մշակույթի, սպորտի, տուրիզմի ոլորտներում համագործակցությունը խթանելու նպատակով՝ խթանել երկու երկրներում անցկացվող կրթական, գիտական, սպորտային և երիտասարդական միջոցառումներին, գիտաժողովներին, սեմինարիներին կողմերի մասնակցությունը: Ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը երկու երկրներում բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից տրամադրված դիպլոմների փոխճանաչման գործընթացը վերջնական տեսքի բերելու համար, ինչպես նաև քննության առնել փոխադարձ մշակութային օրեր անցկացնելու հնարավորությունը:

Կարեն Ղարիբյան
19.09.2023 թ.